

UNIVERSITY LIBRARY

891.99 U  
U-43

Յ Ա Կ . Ա Դ Ա Բ Ա Բ

# ՓԱՇԼԵՒԱՆ ԱՔՍՂԱՂԸ

ԵՀ

## Գ Ի Ժ Մ Ա Ր Տ Ը

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



ԵՐԿՈՒ ՊԱՏՄԻԱԾՔ ԵՒ ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ

ՄԸՆՈՒԿՆԵՐԻ ՀՅՄԵՐ

—→————←—

Թ Ի Յ Լ Ի Ս

ԵԼԵՔՏՐԱԿԱՐԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻ. 7

1907

(72)



Ն Ի Ե Ր

## ԻՄ ՍԻՐԱՍՈՒՆ

ԱՇԱԿԵՐԾ-ԱՇԱԿԵՐԾՈՒՀՆԵՐԻՆ

—Են խելօք-մելօք, չարաճճի, ժիր ու կրակոտ  
աղջիկ ու տղայ բալիկներիս, որոնք վեց տարի շա-  
բունակ, զանազան դպրոցներում, սովորել են ինձ  
մօտ, ինձ ուրախացրել ու միսիթարել են...  
Ապրեն նրանք, շատ ապրեն:

Նրանց կարօտով ուսուցիչ

ՅԱԿ. ԱՂԱԲԱԲ

1907 թիւ, յուլիսի 20-ին  
Թէ Փւ ի ս:



ՆԱՆԻ  
Հ Ր Ա Ւ Ե Ր Ը


«ԲՌԼԻ-ԲՌԼԻ, ԲՌԼԻ-ԲՌԼԻ,  
Իմ բաղիկներ,  
ԵԿԵՔ, ԿԵՐԵՔ Ախորժելի  
ԶԵՐ հատիկներ,  
ՀԵՐԻՔ ինչքան սառը ջրում  
Լող-լըղացիք,  
ԹԿ թափ տալով, գուք անդադրում  
ՃԸՂ-ՃԸՂացիք»:

Բաղ ու բաղիկ, կարմրաթաթիկ,  
Նախշուն փետուր, դիփի խատուտիկ,  
Զւագլուխ, երկայնավիզ,  
Տափակ կտուց, բաց-կարմրամիս՝  
Տուն գնացին օրօրւելով,  
Աղիզ-մաղիզ շօրորւելով։

Տուն գնացին, գտան նանին,  
Տանջանք դառան նանի ջանին.  
—«Չը՝ ը-ճը՝ ըտ, չը՝ ը-ճը՝ ըտ, ղա, ղա, ղա, ղա,  
Բա մեր կուտն էս մը տեղ ա...»:

Նանը գնաց սիմինդ բերեց,  
Առատ-առատ գետնին փըռեց,  
Նրանք կերան լիք-լիք բերան,  
Կըշտացան ու՝ հայդէ, կորան:

### ԵՐԳ ԳԱՐԴԱՆ



Սիրուն գարնւն, դէն, շուտ արի,  
Քեզ ենք սպասում մի տարի,  
Չուն-ձմեռւայ էս ցըտերը՝  
Մաշեցին մեր սրտերը:

Արդէն վաղուց քեզ են կարօտ  
Դաշտն ու այգին ու արօտ,  
Անտառներն և սար ու ձոր  
Քեզ են սպասում օրէցօր:

Երբ որ դու գաս, հետդ բերես  
Կարմիր արև ժպտերես,  
Առատ անձրի ինչքան կարաս  
Մեր ցանքսերին շատ կըտաս:

Արի գարուն, դէն, շնուտ արի,  
Արի լիքն ու բարի,  
Չուն-ձմեռւայ էս ցըտերը՝  
Հալեցին մեր սրտերը:

### ՓԱՇԼԵՒԱՆ

### ԱՔԱՂԱՂԸ

1



Թթին ապէրը մի թաբուն (խումբ)  
հաւ ունէր: Հաւեր եմ ասում է.  
ամեն մէկը՝ մի հնդկահաւի չափ:  
Նրանք բոլորը չաղութիւնից հազիւ էին տեղներիցը շարժ-  
ուում: Ման գալիս՝ գլուխները կուչ ու ձիգ անելով, մար-  
մինն աջ ու ձախ օրօրելով էին քայլում:

Այդ հաւ մարիկներից մէկը սպիտակ էր՝ ամբիծ սպիտակ  
և պսպղում էր արծաթափայլ ձիւնի նման, միւսը կարմիր էր՝  
կան կարմիր և փայլում էր արնագոյն որդանի նման, երրորդը  
սև էր՝ սաթ սև ու պէծ-դում էր ոսկեխառը հանքի նման.  
մի ուրիշը գեղին էր՝ շէկ-գեղին, և հուրհատում էր կրակի  
բոցի նման, մի քանիսն էլ՝ չալ ու չալտիկ, խայտարդէտ, մի  
խօսքով՝ նրանց մէջ կային ամեն գոյնի և ճաշակի հաւեր:

Նրանք մենակ չէին ապրում: Նրանց խմբի թագ ու  
պսակն էր և ամենից նախշ ու նկարն՝ ապօր Աքաղաղը:  
Զեր տեսած աքաղաղներից չէր նա, այլ մի փակեան, մի  
նորափեսայ թռչուն էր նա. հասակը բարձր ու համաչափ,  
վիզն երկայն ու սլուլիկ, գլխի կատարը հրեցէն լեզունե-  
րի փունջ, կուրծքը ծաղկափթիթ ու նախշուն, պոչն եր-  
բներանգ ու կեռ փետուրներից, ոտքերը կոկ ու սուր-  
սուր եղունգներով զինւած, ապա մօրուքը... Մքանչելի  
էր, սքանչելի...

Նա ման էր գալիս միշտ խմբի առաջից՝ վսեմ,  
ուշաղը ութիւնը լարած, չորս բոլորը գիտելով: Մի կաս-

կածելի ձայն: մի տափակ թրիսկոց ականջն ընկնելուն պէս՝  
որ կըշ-կչում, թևերը թափահարում ու ծղրտում չէր,  
մարդու ականջ էր ծակում: Կարծես ինքն էլ էր հասկա-  
նում, որ իր խմբի փահլանն է, հերոսը, հաւերի տէր ու  
տիրականը: Եւ որպէս ազնւաշուք իշխանաւոր, պահան-  
ջակոտ էլ էր, բարկացող, նոյնիսկ հրամայող:

## II

**Ա**պօր նորափեսան առաւօտները շատ կանուխ էր արթնանում: Թառից ցատկում էր դուրս՝ բակն և որ կտուցը բաց չէր անում ու գլուխը ճօճելով «ծուղրնւղուն» կանչում, շրջակայքի քնածների հանգիստը միանգամից էր խանգարում:

—Ծուղրնւղուն... կըկնում էր նա իր չորագաղա-  
նոց կանչն, և հաւերը մէկ-մէկ ցած էին իջնում, նրա շուրջը հաւաքւելով, կտուցներն աջ ու ձախ գեանին էին քսում ու ծկակում վեր՝ դէպի երկինք: Այստեղ գեռ աստ-  
ղեր տեսնելով, սուսիկ-փուսիկ փսխում էին միմանց ականջին և դժոհում:

—Վայ քա, Էսքան էլ վաղ վեր կենալ կըլինի:


—Սնւ, կարմրակատարը չիմանայ, թէ չէ միսդ կը քըրքը, —անսաս էին անում բոլորը:

Իրաւ, ով կը համարձակւէր Փեսին բան ասել և նրա քէփին դիպչել. ամենքը հլու հնագանդ էին նրան: Նա, «կը՝-կը՝-կը՝-կդա-կը՝-կը՝-կը՝» զրուցելով, հաւերին քամա-  
կըն առած, գալիս մօտենում էր ապօր դռանն և բոլորի հետ աչքերը չորս առած, սպասում էր ապօր դռան գա-  
լուն, որ գայ ու իրան ու իր սիրուն-միրուն հարսներին կուտ տայ:

Ապէրը սովորել էր աքաղաղի բնաւորութեանը: Եր-  
բեմն դիտմամբ, մի երկու անգամ դատարկաձեռն էր  
դռը գալիս տնից ու էլի ետ ներս մտնում: Իսկ երբ

երրորդ անգամն էլ՝ գարձեալ առանց կուտի էր երևում աքաղաղի աչքին, էլ հերիք... կատարեալ կոիւ...

Աքաղաղը կըշկըշալով կամ վազում էր ապօր սրունք-  
ներից կըցկտում ու ճըմըթում, կամ ծառս էր լինում և  
ցատկում էր դէպի նրա երեսն ու թևաթակ անելով, կըտ-  
ցահարում և ստիպում էր, որ շնուր անի, կուտ ու ջուր  
տայ իրանց: Երկի, աքաղաղը յաղթում էր նրան: Նա  
գնում էր կուտ բերում և տաս-տասնուհինդ բուռը շար-



Աղւէսն եկել ու պուպուզ նստել էր

մաղ գարի փոելով նրանց առաջ, հազիւ ազատում էր աքաղաղի ձեռքից:

—Դէ կեր ու կշտացիր, —շաղ տալով խօսում էր ապէրը:

—Թըկ, թըկ, թըկ, —գարին հաւաքում էին հաւերը,  
իսկ աքաղաղը՝ կը՝-չ-կը՝-չ-կը՝ և ծիծաղում էր իր տիրոջ վրայ  
և կու տափս հատիկները:

—Նրանք ուտում, խմում, կշտանում էին և մեկնում

բակի խորքերը՝ քջուջ անելու։ Իսկ աքաղաղն, որպէս յաղթող հերոս, ցատկում էր մի բարձր տեղ ու այնտեղից հսկելով իր հարսներին՝ անդադար կրկնում էր իր զիւզիւ «ծուղրուղուան»։

Մի անգամ էլ երեկոյ էր։

Հաւերն իրենց փահլանի հետ հաւաքւել էին ապօր տան դուռն և կուտի էին սպասում։ Ո՞րտեղից որ էր, մի սոված աղւէս՝ եկել էր ու հեռումոտիկ, խոտակիտուկի վրայ՝ պուլուզ նստել։ Աքաղաղը նկատել էր էն սատանի ջնախն (ցեղ) ու էնքան ճշչացել, ծղրտացել և հաւերի հետ հարայ էր տւել, որ պառաւն նրանց կանչ ու աղաղակի վրայ դուս էր եկել գուռը՝ բան-ման իմանալու։

Պառաւի աչքը լաւ չէր կտրում. աքաղաղը կարծես թէ այդ գիտէր. երբ նա դուրս է գալիս, ձեռքը ճակատին տարած սրան ու նրան նայում, աքաղաղը ճշչալով դէս-դէն է վազում և ծուլ ըլում (ցատկել)։ Պառաւն աղւէսին տեսնելով, եղելութիւնը հասկանում է և աջ ու ձախից օգնութեան կանչելով՝ աղւէսին փախցնում—յետ ածել է տալի։ Այսպէս, մեր փահլանն աղւէսից անգամ չէ փախցել և իր ձեռք առած հնարքներով թէ իրեն է ազատել գազանի սուր-սուր ճանկերից և թէ իր կլորիկ-մլորիկ հաւերին։

Շատ անգամ պատահում էր, որ հարեանի հաւերը՝ գալիս խառնում էին իրան հաւերի հետ։ Պահ, աչքդ բարին տեսնի, իսկոյն ցած էր թուչում և «կօ, կօ, կօ, կղօծ, կօ, կօ, կօ» անելով վազում էր կտցահարում և դուրս քշում։ Բայց աւելի խիստ էր, աւելի կրակոտ՝ երբ մի օտար աքաղաղ կընկնէր իրանց բակը։ Այնպէս գզում, այնքան ծեծում և ծւատում էր ճանկն ընկածի միսն ու փետուրն, որ արիւնլիկ արած, փախցնում էր ու հետևիցը դոռում։

—Ծուղ-րուղուան, — այսինքն, թէ՝ «գնա, որտեղ քոնն ասես, այստեղ էլ իմն ասա»։

### III

**Պ**ատահեց որ մի զիշեր գողերն եկան ու ապօր հաւաքունը կտրեցին։ Եկողները հազիւ կարողացան հաւերին հաւաքել թառից, իսկ աքաղաղին, երեխ մոռանալով, կամ թէ զգուշանալով, ձեռք չըտվին, աւարն առան ու հայդէ։

Առաւօտը լուսացաւ. լոյսը ծագելուն պէս աքաղաղը տեսնում է, որ իր հարսները չըկան. էլ ճիշ ու ծղրտնց, էլ կանչ ու աղաղակ, էլ ծուղրուղու և միկտոց, հաւերը չըկան ու չըկան։ Նորափեսան դէս ու դէն է ընկնում, քունջ ու պուճախ վազում, աղք ու աղբանոց հասնում,—ոչ մի տեղ չի գտնում իր սիրունատես հարսներին։ Աքաղաղը մինչ այս դարդ ու կրակի մէջ այրւած ու խորւած փրնուրում է նրանց, ապէրը զարմանում է թէ։

—էս հաւերն ուր են, որ կուտ ուտելու չեն գալիս։

Մին, երկու սպասելուց յետոյ, ճարը կտրած՝ գնում է տեսնելու։ Գնում է, բայց էլ ինչ. ոչ հաւ է գտնում հաւաքնում և ոչ աքաղաղ։ Հայ դէս, հայ դէն, էս մի հարեանի բակը, էն մի փողոցը, մօտակայ կտուրները, բայց դարձեալ հաւերը չըկան։ Ապէրը քօրփօշման գալիս է տուն և ախն ու մուկը քթից արձակելով, պատմում է իր կընոջը թէ։

—Բա չես ասի, ա կնիկ, հաւերը գողացել են։

—Ի՞նչ ես գժւել, մարդ Աստուծոյ, էն որձակի ահուց ով կարէր սիրտ անի ու հաւերին ձեռք տայ։

—Խաչ, Աւետարան, էն Աստօծը, հաւերը գողացել են։

Եւ մի վերջին անգամ էլ դուրս են գալիս և տան մեծ ու փոքրով հաւերին փնտրելու գնում։ Նրանց հետ է լինում և այդ զիշեր ուրիշ քաղաքից եկած ապօր փոքր եղբօրորդին՝ Արմենակը։ Նրանք ամենքը մի կողմը ցրւելով, սկսում են տեսած տեղը մէկ էլ նայել, երկու էլ բայց հաւերը կորած են ու կորած...

Փոքրիկ Արմենակը հազիւ 10 տարեկան էր։ Փնտրելու ժամանակ, նա մօտենում է աղբանոցին ու տեմնում մի աքաղաղ։ Նա չէր իմանում այդ աքաղաղի բնաւորութիւնն և ուզում է բռնել, կարծելով թէ՝ դա էլ է կորել։

Բայց «Ճանիդ մեռնեմ, աքաղաղ...»։ Շուռ է գալիս և իր սրտի զայրոյթը տղայիցն է հանում։ Յատկում է երեսին, ոտքերով կանգնում է Արմենակի կրծքին ու կտցով նրա երեսի միսը ծւատում։ Արմենակը գոռում է.



—Վայ, մեռայ, օգնեցէք...—և ընկնում է գետին։ Աքաղաղն էլ այդ էր ուզում. նստում է նրա վրայ և թեւաթակ տալով ծղրառում։

—Կու-կու-կու կղուռ-ւ-կու-կու-կու, այսինքն թէ՝ «գողին բռնել եմ, եկէք, հասէք»։

Արմենակի ազգականներն, իմանալով աքաղաղի բարձրացրած հարայ-հրոցը, վագում են ուրախացած, կարծելով թէ աքաղաղի կանչը հաւեր դանելու համար է։ Գընում են և ինչ տեսնում. կրակ կտրած «Փահլւան աքաղաղը» Արմենակին կիսաշունչ արած գետին է փոել։

Նրանք հազիւ ազատում են նրան. հաւերի ցաւը թողած՝ վազում են բժշկի ետեից, որ երեխայի ծւատած երեսին դարման անեն։

Այսուհետև աքաղաղին՝ այդ արարքի համար, ապէրն ու միւսներն, ոչինչ էլ չեն անում։ Նրանք լաւ էին հասկացել թէ՝ «Փեսան» հարսներից զրկւած՝ գժւել, դարերն է ընկել։  
(Արտատպած «Հասկեր»-ից)



### ԱԳՈՍՏԻՆ ԼԵԶՈՒՆ

Թակին տւեց ազուր,  
եկաւ նստեց մեր ծառին,  
—Ղոնք, ղոնք, ղոնք...

Դառն ու գուժկան նրա ձայնը  
Գուշակիչ է միշտ չարին.  
—Կրակ, կրակ, կրակ...

Յատկեց նա ցած՝ ծառի տակ,  
Ոստ-ոստում է, կըռ-կըռում.  
—Ղօռ, ղօռ, ղօռ...

Գնդակ գիպչի բկիդ տակ,  
Քանի գոռաս անկշտում.  
—Զօռ, չօռ, չօռ...

Թուաւ, նորից ծառն ելաւ,  
Կըկնեց իրան կուառը.  
—Ղաւ, ղաւ, ղաւ...

—Էս տեսակ էլ վայրի հաւ,  
Հէնց կըրանայ կուուցը՝  
—Ցաւ, ցաւ, ցաւ...

### ՎԱՐԴԱՅԱՅՐԸ (Զւարճալիք)

Հենց որ կըսոյ վարդ մայխը—  
Միխների թագուհին,  
Նախշ ու նկար էն ամիսը  
Նոր կեանը կըտայ ամենթին։

Թոչունները թըռութուով,  
Մըրիւնները վըխտալի,  
Զորս ու բոլոր ծըլւըլալով՝  
«Մայխ» կերպին խընդալի։

Թիթեռնիկներ, մանմ ու բգէջ՝  
Հերթ չեն տալիս մեր մեղւին,  
Օձ ու լօրտուկ, զորտ ու խլէջ՝  
Նրանք էլ կերգեն խմբովին:


Բաս զա՞ռները, տես էն կողմը,  
Տես ի՞նչպէս են արածում,  
Արածում են եւ շա՞տ մեղմը  
Դառնարածի հետ երգում:



Նրանք սրտագին կանչում են՝—մա՛,  
Դառնարածն է քշում՝—յի՛ս,  
—«Մա՛-յի՛ս», «մա՛-յի՛ս» երբ  
միանայ՝  
Կըստացւի մեզ ճիշտ «մայիս»:





## Ս Ո Վ Ա Ժ Կ Ա Ժ Ո Ւ Խ



Կապիկ ջա՞ն, դու մուկ կու-  
տե՞ս,  
Ախորժակդ ի՞նչպէս է,  
Չը լի շունը դգեց քեզ,  
Էնդուր քէփդ էլ փիս է:  
—Միայօ, միայօ...

Վայ-վայ, ափսո՞ս իմ կատու,  
Չէնդ էլ է կտրւել,  
Էտ ի՞նչ օրի ընկար դու,  
Շունը բուգդ է բռնել:  
—Միայօ, միայօ...

«Ո՛չ թէ շունը, բարեկա՞մ,  
Մօտ մի շաբաթ է անցել,  
Սոված փորով ընկած կամ  
Եւ մկան համ չեմ տեսել»:



## Գ Ի Փ

## Մ Ա Ր Տ Ը

Ն ո ւ... վնան ու ու... վչում է  
կատաղաբար մարտի քամին և ա-  
մենքի սիրտն ու հոգին ահ ու դո-  
ղով լցնում:

«Թը ոռոռ...» թռչում է կոր-  
ծանիչ քամին և սար ու ձոր իրար գլխի տալով, մտնում է  
անտառների և ծառասահների մէջ:

«Վը զզզզ...» գողում և մրմնջում է ամեն մի ծառ  
ու ծաղիկ, թռւի ու ցօղուն և անժամանակ մրսում և  
դալկանում:

Եւ այսպէս տարւայ տասներկու ամիսներից մարտի  
նման գիծ, անդնջում ամիս չըկայ: Իր ծնւած օրից մին-  
չև այսօր էլ նա պատուհաս է ամենքի համար:

Ամեն տարի, հէնց որ մտնում ենք մարտ ամիսը,  
կամայ ակամայ յիշում եմ ողորմած հոգի Քալի նանիս  
պատմութիւնը:

Լուսահոգի նանս պատմում էր. «Մի Աստծու անի-  
ծած պառաւ է լինում, այնքան չար, այնքան թունալից,

որ օձին թքէր, օձը կը սատակէր, ջրի գնար՝ ջուրը կը ցամաքէր, կանաչը կոխէր՝ կանաչը կը չորաճնար։ Նա ունենում է երկու տղայ և մի աղջիկ։ Անդրանիկի անունը լինում է Մարտո (Մարտիրոս), միջնակինը՝ Ապրես, իսկ ամենից կրտսեր-աղջկանը՝ Մայիս։ Գարնանամտին, երբ պառակի ոչխառները ծնում են, նա փոքրիկ գառներն անում է Մարտոյի առաջն, որ հանդը տանի արածացնի։ Մի քանի օր մեր գառնարածը մեծ ուշադրութեամբ կատարում է իր պաշտօնը։ Մի օր էլ նա հանդումն եղած ժամանակ, գառները թողնում է արածելիս և ինքն ընկերանում է իրանց հարևան գառնարածների հետ, սկսում է խաղ անել։

«Կանաչ դաշտ և մանկական խաղ։ Մարտօն այնքան տարւում է խաղով, որ մէկ էլ, երբ յանկարծ միտքն է ընկնում իր գառները, վազում-գնում, տեսնում է՝ որ գայլն ընկել է գառների մէջ, մի քանիսին վիրաւորել է, մի քանիսին պատառտել, և մի քանիսին էլ տարել-վախցրել է, մնացածներն էլ ցան ու ցրիւ են եկել ու կորել։ Անզգոյց Մարտօն՝ մինչև երեկոյ լաց ու սքով անցկացնելուց յետոյ, երեկոյեան մնացած գառները քշում, բերում է տուն։

«Ո՞չ իմանար պառաւը...»

«Հէնց որ լուրը հասնում է նրա ականջին, մահակն առնում, տներ թէ կտաս, սկսում է թակել, «բան հոգի» անել խեղճ Մարտօին։ Թակելուց յոգնելով, այնուհետև սկսում է անիծել։

«—Գժւես, դարերն ընկնես, Մարտօ, օր ու արեգ խաւարի, Մարտօ, սուգ ու շիւանն ըմբիցդ (կեանքիցդ) անպակաս ըլի, Մարտօ, հաց ու ջուրդ հառամի, Մարտօ...»

«Միւս եղբայրն ու քոյրը—Ապրեսն ու Մայիսն մէջն են ընկնում, մի կերպ ազատում են Մարտօյին պառաւի ձեռքից։ Մարտօն հազիւ հազ իրան պատի քամակը գցելով գլուխն առնում է և փախչում է տնից։ Եղբայր ու քոյր երեք օր սպասում են իրենց մեծ եղբօրը, երբ տեսնում

են, որ էլ չի վերադառնում, մէկը միւսի ետևից դուրս են գալիս փնտրելու փախստական Մարտօյին...»

Քալի նանի պատմւածքի տպաւորութեան տակ՝ երեխաներս «վախկոտած» կպչում էինք նանի ծնկներից և կրկնում։

—Գրողը տանի քեզ, ինչ որ պառաւ ես, հա՞.

—Քաւթարքօսու փայ դառնաս, պառաւ.

—Նանի ջան, նանի, ետոյ, ետոյ.., ասա տեսնենք՝ վերջն ինչ եղաւ։

Քալի նանը մեզ  
գրկելով, աւելի ոգե-  
որւած շարունակում  
էր։

«Ահա այն օրից  
սկսած՝ գարնանմաի  
ամիսը՝ Մարտօյի  
անունով կոչւում է  
Մարտ և չար պա-  
ռաւի անէծքի հա-  
մաձայն՝ այդ ամիսն  
անցնում է գժի նը-  
ման։ Մի երկու օր  
արև. Է՝ ուրախու  
թիւն, մի երկու օր  
խաւար է՝ տիրու-  
թիւն, մի երկու օր  
անձրէ է՝ լաց ուար-  
ասառք, մի երկու

օր էլ քամի է՝ բարկութիւն, իսկ վերկից լսող գոռզոսոցը՝ Մարտօյին կպչող փայտի թակոցն է։

«Մարտից յետոյ՝ միջնակ եղբայր Ապրեսն է աշխարհ գալիս։ Նա «ոլարած» (թմրած) բնութեանը կեանք ու ապրել է տալիս, կենդանացնում է, և այդ ամիսն էլ Ապ-  
րեսի անունով՝ կոչւում է Ապրիլ։»



—Վայ, ի՞նչ լաւ ախպեր է եղել է, ընդհատում էինք մենք:

—«Իսկ երբ Ապրեսն էլ երկար փնտրելով, իր փախստական եղբօրը չի կարողանում գտնել, նրա քոյլ Մային է սկսում դաշտ ու ձոր ընկնել, անտառ ու ծառաստան մտնել, բաղ ու բտղչա վազել, ամենքին ուրախացնել, ամենքին զարդարել, բոլորին նոր ու նոր ընծաներ բաշխել, որպէս զի՝ գոնէ այդ լաւութիւնով կարողանայ իր կորած եղբօրը գտնել, որ գոնէ մէկը՝ ծառ կամ թուփ, քար կամ թումբ, կանաչ կամ ծաղիկ, թռչուն կամ սողուն, չորքոտանի կամ անասուն, ասեն թէ եղբայրն ուր է:

«Եւ ահա Մայնի անցած տեղով ձեր աչքը կըտեսնի, ձեր ականջը կը լսի, որ բնութիւնը շունչ ու հոգի առած, ծտի լեզով, ճանճի բըզզոցով, ծառերի սըւսըւոցով, մի խօսքով, ամենքն ինչով որ կարող են՝ փափսում են ու կանչում.—«Մ մ մ մ Մայի, մ մ մ մ Մայի, արի ասենք,  
արի ասենք» Ահա Մայնի անունով էլ այդ ամիսը կոչւում  
է Մային:

*Հազիւնանը վերջացնում էր իր պատմութիւնը, մեր օրունը լավագութեաւ էր մեզ և մենք ննջում էինք...*  
(Արտասպած «Հասկեր»-ից)

## Հ Ե Ղ Ե Ղ

Անձրև է գալիս քըչ-բրչալի,  
Ցած է թափուում փըչ-փըչալի,  
Ախր այ անձրև, ի՞նչ ես կատղել,  
Գոնէ մի քիչ՝ քիչ-քիչ արի:

Ես անձրև չեմ, չէ, այլ յորդ հեղեղ,  
Աշխարհ կանեմ ջուր-ջըրհեղեղ,  
Ուր որ կամենաք ինձնից փախչել՝  
Չեզ կրհասնեմ ամեն մի տեղ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0399628

ՀՀ Ազգային գրադարան



NL0399627

ՀՀ Ազգային գրադարան



NL0399018

6380-  
-6382

